«Հաստատված է»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոնի ամբիոնի 30.08.2019թ-ի նիստում, արձանագրություն թիվ 1
Ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Մ.Սեմերջյան

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	Կրիմինալիստիկական մարտավարություն և տեխնոլոգիա
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ	
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Մագիստրատուրա, առկա ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ	Օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության E-mail:OHGKRIM@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ	իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Ենգիբարյան հեռ.077-95-55-55 E-mail: vahe777@yahoo.com
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ	1-ին կուրս, 1-ին կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ	մագիստրոս

ԿՐԵԴԻՏՆԵՐ	3 (երեք)
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ	«Կրիմինալիստիկական մարտավարություն և տեխնոլոգիա» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 90 ժամ, որից 28 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար, 58 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասաժամերն անցկացվում են շաբաթական մեկ անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում քննություն հանձնելով:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ	Դասընթացը կառուցվում է «Կրիմինալիստիկա», «ՀՀ Քրեական դատավարության իրավունք» դասընթացների իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	«Կրիմնալիստիկական մարտավարություն և տեխնոլոգիա» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են կրիմինալիստիկական մարտավարության ընդհանուր դրույթները, քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների համակարգը, առանձնահատկությունները, քննիչի հետախուզական գործունեության էությունը, հանցա-

		գործունեությունների բացահայտման և քննության մասնակիցների փոխգործողության կազմակերպման հիմքերն ու եղանակները, մարտավարական հնարքների համակարգը, դրանց թույլատրելիության չափանիշները, կիրառման տեխնոլոգիան, քննչական իրադրությունները, քննության պլանավորումը, օպերատիվ-հետախուզական գործունեության տեխնոլոգիան, մարտավարական կոմբինացիան և օպերացիաները, մարտավարական որոշումը:
ՆՊԱՏԱԿ **ԽՆԴԻՐ/ՆԵՐ**		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ կիրմինալիստիկական մարտավարության ու տեխնոլոգիայի, քննչական գործողությունների համակարգի, քննության պլանավորման ու կազմակերպման էության ու սկզբունքների, քննիչի հետախուզական գործունեության բովանդակության, քննչական իրադրության, առանձին քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման մարտավարական հնարքների համակարգի ու տեխնոլոգիական առանձնահատկությունների, մարտավարական կոմբինացիայի և օպերացիաների, մարտավարական որոշումների նշանակության վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են՝ 1) ներկայացնել կրիմինալիստիկական մարտավարության և տեխնոլոգիայի հասկացությունն ու ժամանակակից բովանդակությունը, 2) ուսումնասիրել քննության կազմակերպման սկզբունքներն ու փոխգործողության ապահովման ձևերը, 3) ներկայացնել քննչական գործողությունների և մարտավարական հնարքների համակարգը և դրանց կիրառման թույլատրելիության չափանիշները, 4) ուսումնասիրել քննչական իրադրության հասկացությունը, կառուցվածքը, տեսակները և քննիչի գործունեությունը մարտավարական ռիսկի պայմաններում, 5) ներկայացնել քննության պլանավորման սկզբունքները, քննչական պլանի տեսակներն ու դրանց գործնական նշանակությունը, 6) ուսումնասիրել առանձին քննչական գործողությունների կատարման մարտավարությունն ու տեխնոլոգիական առանձնահատկությունները, 7) ուսումնասիրել օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման տեխնոլոգիական առանձնահատկությունները, 8) ներկայացնել մարտավարական կոմբինացիայի և օպերացիաների հասկացությունը, կառուցվածքը և տեսկաները, մարտավարական որոշման հասկացությունը, նախապատրաստության և ընդունման առանձնահատկությունները:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***Կարողանա***		1) ներկայացնել քննչական աշխատանքի մարտավարական կողմերն ու դրանց կազմակերպման առանձնահատկությունները, 2) տարբերել և թվարկել փոխգործողության ձևերն ու եղանակները, 3) վերլուծել մարտավարական հնարքների կիրառման թույլատրելիության ընդհանուր պայմանները

		4) ներկայացնել քննչական իրադրության կառուցվածքը, առանձնահատուկ գծերը և դրա տիպաբանությունը, 5) ներկայացնել քննության պլանավորման ընդհանուր պայմաններն ու սկզբունքները, դրանց գործնական կիրառման առանձնահատկությունները 6) վերլուծել առանձին քննչական գործողությունների կատարման մարտավարական ու տեխնոլոգիկական առանձնահատկությունները, 7) ներկայացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունավետ իրականացման տեխնոլոգիան, 8) վերլուծել և ներկայացնել մարտավարական օպերացիաների, մարտավարական կոմբինացիայի էությունը, տեսակներն ու առանձնահատկությունները, ինչպես նաև մարտավարական որոշման նախապատրաստման և ընդունման առանձնահատկությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, Երևան, 1998, /փոփոխություններն ու լրացումները՝ 2007թ. ապրիլի 11-ի դրությամբ/: 2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, Երևան, 2003, /փոփոխություններն ու լրացումները՝ 2007 թ. ապրիլի 11-ի դրությամբ/: 3. Հայաստանի Հարապետության օրենքը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», Երևան, 2007: 4. Հայաստանի Հարապետության քրեական դատավարություն: Ընդհանուր մաս /Գ.Ս.Ղազինյանի խմբագրությամբ, Եր,. ԵՊՀ հրատ., 2004, 5. Ենգիբարյան Վ. Գ. Առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկա: Կրիմինալիստիկական տակտիկա: Գիտագործնական ձեռնարկ: Երևան, 2018: 6. Ենգիբարյան Վ. Գ. Հանցագործությունների քննության կազմակերպման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմքերը: Մենագրություն: Երևան, Անտարես հրատ., 2016: 7. Ենգիբարյան Վ. Գ. Հանցագործությունների քննության մեթոդիկա: Կրիմինալիստիկական մեթոդիկա: Դասագիրք բուհերի համար՝ երաշխավորված ՀՀ ԿԳՆ-ի կողմից: Երևան, «Թասկ ՍՊԸ», 2017: 8. Россинский С. Б. Следственные действия. Монография. М., изд. НОРМА, 2018. 9. Криминалистика: Учебник для вузов. Под ред. Р.С.Белкина,-М.: Издательская группа НОРМА-ИНФРА М, 1999. 10. Криминалистика: учебник /Т.В.Аверянова, Р.С.Белкин, Ю.Г.Корухов, Е.Р.Россинская.-3-е изд. Перераб. И доп..- М.: Норма. 2008. 11.Криминалистика: Учебник /Под ред. А.Г.Филиппова.- 3-е изд., пере-раб. И доп.-М.: Спарк, 2004. 12. Криминалистика: учебник /под ред. А.Г.Филиппова.-М.: Высшее образование, Юрайт-Издат, 2009.
Լրացուցիչ		1. Белкин Р.С. Курс криминалистики В 3 т. Т.3: Криминалистические средства, приемы и рекомендации.- М.: Юристь, 1997. 2. Чебуренков А.А. Общетеоретические положения и практичские аспекты

криминалистической тактики.-М.: Изд./Юрлитинформ/, 2008.
3. Следственные действия. Криминалистические рекомендации. Типо-вые образцы документов /Под ред. В.А.Образцова.- М.: Юрист, 1999.
4. Криминалистика. Краткая энциклопедия. Р.С.Белкин. Москва Науч-ное изд.: Большая Российская Энциклопедия, 1993.
5. ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի որոշումների ժողովածու, Երևան, 2017, հատոր 3:
6. http://www.ccc.am
7. http://police.am
8. http://investigative.am

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԵՎ ԿՇԻՌ

Ընթացիկ ստուգման ձևը քննություն

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով
18-20	Գերազանց
13-17	Լավ
8-12	Բավարար
0-7	Անբավարար
	Չներկայացած

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% առաջա-դիմություն:

Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար», «Անբավարար» և «Չներկայացած»:

Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝

ա) «Գերազանց», եթե սովորողը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով.

բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների.

գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները.

		դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:
Ներկայություն		Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն և գործնական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերն օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրն ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՈՒՄ

Թեմա 1 **Կրիմինալիստիկական մարտավարության և տեխնոլոգիայի տեսահրավական հիմքերը և ժամանակակից մարտահրավերները:** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Կրիմինալիստիկական մարտավարության և տեխնոլոգիայի հասկացությունը: 2. Կրիմինալիստիկական մարտավարության և տեխնոլոգիայի էությունն ու տեսական հիմքերը: 3. Կրիմինալիստիկական մարտավարության և տեխնոլոգիայի էությունն ու իրավական հիմքերն:	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 2-3 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը:

Թեմա 2 **Քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների համակարգը. տեսակներն ու դասակարգման չափանիշները:** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քննչական գործողությունների հասկացությունը և տեսակները: 2.Օպերատիվ-հետախուզական միջոցառումների հասկացությունը և տեսակները:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարց 2 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար:

Թեմա 3 **Հանցագործությունների բացահայտմանն ու քննությանը մասնակցող անձանց միջև փոխգործողության կազմակերպման ժամանակակից ձևերը, եղանակներն ու մեթոդները:** **(4 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հանցագործությունների բացահայտմանն ու քննության կազմակերպման ընդհանուր դրույթներն ու սկզբունքները, սուբյեկտների շրջանակը: 2. Հանցագործությունների բացահայտմանն ու քննության կազմակերպման հիմնական ձևերը: 3. Հանցագործությունների բացահայտմանն ու քննության կազմակերպման եղանակներն ու մեթոդները:	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 ինքնուրույն աշխատանք: Սովորողները ծանոթանում են գրականությանը տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար:

Թեմա 4 **Մարտավարական ու տեխնոլոգիական հնարքների համակարգն ու դրանց կիրառման թույլատրելիության ժամանակակից չափանիշները:** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**

1. Մարտավարական ու տեխնոլոգիական հնարքների համակարգը: 2. Մարտավարական ու տեխնոլոգիական հնարքների կիրառման թույլատրելիության հասկացությունը: 3. Մարտավարական ու տեխնոլոգիական հնարքների կիրառման թույլատրելիության չափանիշների համակարգը: 4. Անձի վարքագծի վրա ներազդելու հասկացությունն ու թույլատրելիության սահմանները:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 3-4 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են մասնագիտական գրականությանը, վեր հանված հարցերը, որոնք քննարկվում են սեմինար պարապմունքի ժամանակ: Սեմինար պարապմունք: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները և քննարկվում են խնդրահարույց հարցերը:

Թեմա 5 **Քննչական իրադրության էությունն ու դրա նշանակությունը մարտավարական որոշումների ընդունման և քննության պլանավորման համար:** **(4 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1 Քննչական իրադրության հասկացությունը և կառուցվածքը: 2. Քննչական իրադրությունների դասակարգումը: 3.Քննչական իրադրության դերը հանցագործությունների պլանավորման և վարկածների առաջադրման գործում:	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 ինքնուրույն աշխատանք: Սովորողները ծանոթանում են հանձնարարված գրականությանը:

Թեմա 6 **Քննչական գործողությունների կատարման մարտավարությունն ու հնարքների համակարգը:** **(4 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քննչական գործողությունների կատարման մարտավարական հնարքների համակարգը: 2. Քննչական գործողությունների կատարման մարտավարությունն ու հնարքների դասակարգումը: 3. Դատարանի թույլտվությամբ կատարվող քննչական գործողությունների մարտավարական առանձնահատկությունները:	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն Հարցեր 2-3 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են հանձնարարված գրականությանը:

Թեմա 7 **Առանձին քննչական գործողությունների կատարման տեխնոլոգիական առանձնահատկությունները:** **(6 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Առանձին քննչական գործողությունների կատարման տեխնոլոգիայի հասկացությունը: 2. Առանց դատարանի թույլտվության կատարվող քննչական գործողությունների տեխնոլոգիական առանձնահատկությունները (զննում, քննում, առգրավում, քննչական փորձարարություն, ճանաչում, հարցաքննություն, առերեսում, փորձաքննության նշանակում և կատարում):	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Հարցեր 1-2 ինքնուրույն աշխատանք: Սովորողները ծանոթանում են հանձնարարված գրականությանը: Ստուգվում են ընթացիկ հանձնարարությունները:

Թեմա 8 **Մարտավարական օպերացիա և կոմբինացիա, դրանց կազմակերպման տեխնոլոգիան:** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Մարտավարական օպերացիայի էությունը, կառուցվածքն ու տեսակները: 3. Մարտավարական կոմբինացիայի հասկացությունը և խնդիրները և կառուցվածքը: 3. Մարտավարական կոմբինացիայի թույլատրելիության ընդհանուր պայմանները և տեսակները: 4.Մարտավարական որոշման հասկացությունն ու դրա ընդունման փուլերը:	Հարցեր 1-4 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-4 ինքնուրույն աշխատանք. Սովորողները ծանոթանում են նորմատիվ ակտերի և հանձնարարված գրականությանը: Սեմինար պարապմունք՝ քննարկվում են խնդրահարույց հարցերը: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Հարցաշար

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 1-ին կուրսի «Կրիմինալիստիկական մարտավարություն և տեխնոլոգիա» առարկայի առաջին ընթացիկ /միջանկյալ/ քննության

1. Կրիմինալիստիկական մարտավարության և տեխնոլոգիայի հասկացությունն ու բովանդակությունը:
2. Կրիմինալիստիկական մարտավարության ընդհանուր դրույթներն ու հիմքերը:
3. Մարտավարական հնարքի և հանձնարական հասկացությունը, դրանց փոխհարաբերակցությունը:
4. Մարտավարական և տեխնոլոգիական հնարքի կիրառման թույլատրելիության չափանիշներն ու սահմանները:
5. Քննչական գործողությունների հասկացությունը և դրանց տեսակները:
6. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների հասկացությունը և տեսակները:
7. Հանցագործությունների բացահայտման և քննության կազմակերպման հասկացությունն ու բովանդակությունը:
8. Հանցագործությունների բացահայտման և քննության ընթացքում փոխգործողության կազմակերպման հիմնական ձևերն ու եղանակները:
9. Քննության պլանավորման սկզբունքները:
10. Քննչական պլանի տեսակները:
11. Քննչական վարկածների հասկացությունը և տեսակները:
12. Քննչական վարկածների առաջադրման և ստուգման հիմնական պայմաններն ու սկզբունքները:
13. Քննիչի հետախուզական գործունեության հասկացությունը:
14. Քննչական իրադրության հասկացությունը և կառուցվածքը:
15. Քննչական իրադրությունների դասակարգումը և դրանց նշանակությունը:

Հարցաշար

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 1-ին կուրսի «Կրիմինալիստիկական մարտավարություն և տեխնոլոգիա» առարկայի երկրորդ ընթացիկ /միջանկյալ/ քննության

1. Քննչական զննության տեսակներն ու դրանց կատարման տակտիկայի ընդհանուր դրույթները:
2. Դեպքի վայրի զննության նախապատրաստությունը:
3. Դեպքի վայրի զննության տակտիկական հնարքները, ամրագրումն ու դրանց օգտագործման տակտիկական հնարավորությունները:
4. Խուզարկության նախապատրաստությունը:
5. Խուզարկության կատարման հիմքերը:
6. Խուզարկության տեսակներն ու դրանց կատարման տակտիկական առանձնահատկությունները:
7. Քննչական փորձարարության նախապատրաստությունը:
8. Քննչական փորձարարության կատարման տակտիկական ընդհանուր պայմանները, տեսակներն ու դրանց կատարման տակտիկական առանձնահատկությունները:
9. Ճանաչման ներկայացնելու նախապատրաստությունը:
10. Ճանաչման ներկայացնելու տեսակներն ու դրանց կատարման տակտիկական առանձնահատկությունները:
11. Հարցաքննության նախապատրաստությունը ու դրա տակտիկական հնարքների համակարգը:
12. Հարցաքննության արդյունքների ամրագրումն ու դրանց օգտագործման տակտիկական հնարավորությունները:
13. Առերեսման տակտիկական հնարքների համակարգը, արդյունքների ամրագրումն ու դրանց օգտագործման տակտիկական հնարավորությունները:
14. Փորձաքննության նշանակման նախապատրաստությունը:
15. Փորձագետի եզրակացության գնահատման գիտական ու գործնական չափանիշները:

ՀԱՐՑԱՇԱՐ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 1-ին կուրսի «Կրիմինալիստիկական մարտավարություն և տեխնոլոգիա» առարկայի քննության

1. Կրիմինալիստիկական մարտավարության և տեխնոլոգիայի հասկացությունն ու բովանդակությունը:
2. Կրիմինալիստիկական մարտավարության ընդհանուր դրույթներն ու հիմքերը:
3. Մարտավարական հնարքի և հանձնարական հասկացությունը, դրանց փոխհարաբերակցությունը:
4. Մարտավարական և տեխնոլոգիական հնարքի կիրառման թույլատրելիության չափանիշներն ու սահմանները:
5. Քննչական գործողությունների հասկացությունը և դրանց տեսակները:
6. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների հասկացությունը և տեսակները:
7. Հանցագործությունների բացահայտման և քննության կազմակերպման հասկացությունն ու բովանդակությունը:
8. Հանցագործությունների բացահայտման և քննության ընթացքում փոխգործողության կազմակերպման հիմնական ձևերն ու եղանակները:
9. Քննության պլանավորման սկզբունքները:
10. Քննչական պլանի տեսակները:
11. Քննչական վարկածների հասկացությունը և տեսակները:
12. Քննչական վարկածների առաջադրման և ստուգման հիմնական պայմաններն ու սկզբունքները:
13. Քննիչի հետախուզական գործունեության հասկացությունը:
14. Քննչական իրադրության հասկացությունը և կառուցվածքը:
15. Քննչական իրադրությունների դասակարգումը և դրանց նշանակությունը:
16. Քննչական զննության տեսակներն ու դրանց կատարման տակտիկայի ընդհանուր դրույթները:
17. Դեպքի վայրի զննության նախապատրաստությունը:
18. Դեպքի վայրի զննության տակտիկական հնարքները:
19. Դեպքի վայրի զննության արդյունքների ամրագրումն ու դրանց օգտագործման տակտիկական հնարավորությունները:
20. Խուզարկության նախապատրաստությունը:
21. Խուզարկության կատարման հիմքերը:
22. Խուզարկության տեսակներն ու դրանց կատարման տակտիկական առանձնահատկությունները:
23. Քննչական փորձարարության նախապատրաստությունը:
24. Քննչական փորձարարության կատարման տակտիկական ընդհանուր պայմանները:
25. Քննչական փորձարարության տեսակներն ու դրանց կատարման տակտիկական առանձնահատկությունները:
26. Քննչական փորձարարության արդյունքների ամրագրումն ու դրանց օգտագործման տակտիկական հնարավորությունները:
27. Ճանաչման ներկայացնելու նախապատրաստությունը:
28. Ճանաչման ներկայացնելու տեսակներն ու դրանց կատարման տակտիկական առանձնահատկությունները:
29. Հարցաքննության նախապատրաստությունը:
30. Հարցաքննության կատարման տակտիկական ընդհանուր պայմանները:
31. Հարցաքննության տեսակներն ու դրանց տակտիկական հնարքների համակարգը:
32. Հարցաքննության արդյունքների ամրագրումն ու դրանց օգտագործման տակտիկական հնարավորությունները:
33. Առերեսման նախապատրաստությունը:

34. Առերեսման տակտիկական ընդհանուր պայմանները:
35. Առերեսման տակտիկական հնարքների համակարգը:
36. Առերեսման արդյունքների ամրագրումն ու դրանց օգտագործման տակտիկական հնարավորություններ:
37. Փորձաքննության նշանակման նախապատրաստությունը:
38. Դատական փորձաքննությունների տեսակները և դրանց կատարման առանձնահատկությունները:
39. Փորձագետի եզրակացության գնահատման գիտական ու գործնական չափանիշները: